Հավելված N 2
ՀՀ վարչապետի 2023 թվականի մարտի 23-ի
N 326-Ն որոշման
Հավելված N 3
ՀՀ վարչապետի 2018 թվականի
սեպտեմբերի 19-ի N 1230-Ն որոշման

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐՋՆԱՀԱՇՎԱՐԿԻ ՄԱՍԻՆ

1. Մարմնի անվանումը՝ **ՀՀ էկոնոմիկայի նախարարություն**

2.Գործուղման մասին իրավական ակտի համարը՝ **ՀՀ փոխվարչապետի N 535-Ա որոշում առ 20.06.2025թ.**

3. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը (մասնագիտությունը)՝

Գևորգ Պապոյան - ՀՀ էկոնոմիկայի նախարար

(թվարկել՝ պատվիրակություն գործուղելու դեպքում)

4. Գործուղման ժամկետները՝ **2025 թվականի հունիսի 23-ը**

5. Գործուղման վայրը՝ **Վրաստան (Թբիլիսի)**

6. Գործուղման ծախսերի ֆինանսավորման աղբյուրը՝ Հայաստանի Հանրապետության 2025 թվականի պետական բյուջեով արտասահմանյան պաշտոնական գործուղումների համար նախատեսված միջոցների հաշվին:

1) հրավիրող կողմի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը
(թվարկել՝ ճանապարհածախս, գիշերավարձ, օրապահիկ և այլն)

2) պետական բյուջեի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը
(ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմանը համապատասխան)
(ընդգծել ծախսերի փոխհատուցման տարբերակը)

ա. փաստացի կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթերի հիման վրա՝ դրանցով սահմանված չափով, բայց ոչ ավելի, քան ցանկով նախատեսված չափերը

բ. գործուղման անհատական իրավական ակտով տվյալ գործուղման փաստացի կատարված ծախսերի հատուցման պահանջի համաձայն

Ծախսի տեսակը		Գևորգ Պապոյան	Ընդամենը (դրամ)
Ճանապարհածախս	Ավիաճառայության տեսակը (էկոնոմ դաս, բիզնես դաս)	էկոնոմ դաս	
	Ավիատոմսի արժեքը (դրամ)	**82,383**	**82,383**
Գիշերավարձ	Վճարը 1 գիշերվա համար		
	Վճարը 1 գիշերվա համար (դրամ)	-	
	Գիշերների քանակը		
	Ընդամենը (դրամ)	**-**	**-**
Օրապահիկ	Վճարը 1 օրվա համար (Թբիլիսին, USD)	74	
	Վճարը 1 օրվա համար (դրամ)	28,540	
	Օրերի քանակը (23 - հունիս 25թ.)	1	
	Ընդամենը (դրամ)	**28,540**	**28,540**
Այլ ծախսեր	Հակահամաճարակային նմուշառումների վճար		
	Մուտքի արտոնագրի վճար		
	Այլ ծախսեր *(ՊՊՍ սրահ)*	10,000	10,000
Ընդամենը ծախսեր (դրամ)		**120,923**	**120,923**
Նախահաշվարկով վճարված (դրամ)		**28,540**	**28,540**
Ընդամենը վճարման ենթակա (դրամ)՝ որից		**92,383**	**92,383**
Ավիատոմսի գումարը (դրամ)		**82,383**	**82,383**
Վճարման ենթակա (դրամ)		**10,000**	**10,000**

*20.06.2025թ. ՀՀ ԿԲ արտարժույթի միջին փոխարժեք 1 USD 385.68

Գլխավոր քարտուղար
/Գլխավոր ֆինանսիստ/՝ ՀԱՅԿԱԶ ՆԱՍԻԲՅԱՆ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

1. Անունը, ազգանունը՝

Գևորգ Պապոյան

2. Զբաղեցրած պաշտոնը՝

ՀՀ էկոնոմիկայի նախարար

3. Գործուղման վայրը և ժամկետները՝

Վրաստան՝ ք. Թբիլիսի, 2025 թվականի հունիսի 23

4. Հրավիրող կողմը՝

Աշխատանքային այցը կազմակերպվել է ՀՀ էկոնոմիկայի նախարարության նախաձեռնությամբ

5. Գործուղման նպատակը՝

Վրաստանի տարածքով հայկական բրենդիի տարանցիկ փոխադրման ընթացքում առաջացած խնդիրների քննարկում և հնարավոր լուծումների որոնում՝ ապահովելու բեռնատարների անխոչընդոտ շարժը:

6. Քննարկված թեմաները՝

Վրաստանի տարածքով հայկական բրենդիով բեռնված բեռնատարների տարանցման գործընթացում առաջացած խնդիրների հաղթահարմանն ուղղված քննարկումների իրականացում: Վրաստանի մաքսային մարմինների կողմից հայկական բրենդիի փոխադրումների անհիմն և երկարատև կանգնեցումների պատճառով առաջացած ֆինանսական կորուստների և առևտրային պայմանագրերի խախտման վտանգի պատճառով, քննարկվել են փոխադրումների պարզեցման, համագործակցության մեխանիզմների ձևավորման և մաքսային ընթացակարգերի կանխատեսելիության բարձրացման ուղիները: Հատուկ ուշադրություն է դարձվել հայկական բրենդիի արտահանման գործընթացի կանոնակարգմանը, բեռնատարների անխափան և ժամանակին

տարանցման ապահովման նպատակով փոխվստահության հիման վրա աշխատանքային լուծումների մշակմանը:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

Այցի շրջանակում նախարար Գևորգ Պապոյանը ունեցել է բարձր մակարդակի հանդիպումներ՝ Վրաստանի առաջին փոխվարչապետ, էկոնոմիկայի և կայուն զարգացման նախարար Լևան Դավիթաշվիլիի, Վրաստանի գյուղատնտեսության և շրջակա միջավայրի նախարար Դավիթ Սոնգուլաշվիլիի, և Վրաստանի ՊԵԿ ղեկավար Իրակլի Բերաիայի հետ: Հանդիպումներին մասնակցել են նաև ՀՀ ՊԵԿ նախագահ Էդուարդ Հակոբյանը, ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ Արման Խոջոյանը, ՊԵԿ նախագահի տեղակալ Կարեն Թամազյանը և Վրաստանում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան Աշոտ Սմբատյանը: Բանակցությունների ընթացքում բարձրացվել են հայկական բրենդիի տարանցման գործընթացում առաջացած համակարգային խնդիրները՝ կապված մաքսային տերմինալներում անհիմն կանգնեցումների, լրացուցիչ ծախսերի, պայմանագրային պարտավորությունների խախտման և կոնյակի արտահանման ռիսկերի նվազեցման հետ: Հնչել են ելույթներ առևտրային համագործակցության խորացման, տարանցման ենթակա ապրանքների ընթացակարգերի պարզեցման, ինչպես նաև երկկողմ տնտեսական կապերի ամրապնդման վերաբերյալ:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

Բանակցությունների արդյունքում կողմերը ձեռք են բերել մի շարք կարևոր պայմանավորվածություններ, որոնք նպատակ ունեն կարգավորել առկա իրավիճակը և կանխել դրա կրկնությունը: Մասնավորապես, Վրաստանի իշխանությունների հետ պայմանավորվածություն է ձեռք բերվել Գեզի մաքսային տերմինալից ազատել հայկական բրենդի տեղափոխող 55 բեռնատար ս. թ

հունիսի 23-ին, ևս 72 բեռնատար՝ առաջիկա յոթ օրվա ընթացքում, իսկ լրացուցիչ 24 բեռնատար՝ հաջորդիվ: Կողմերը համաձայնության են եկել նաև, որ այսուհետ հայկական բրենդիի արտահանման գործընթացը կիրականացվի փոխադարձ ընդունելի, կանխատեսելի և համակարգված պայմաններով: Այս պայմանավորվածությունների արդյունքում հնարավոր կլինի մեղմել տնտեսավարողների կրած վնասները և վերականգնել հայկական բրենդիի մատակարարման գործընթացը:

9. Ստորագրությունը, ամսաթիվը

25.06.2025թ.